

ինքն, Աւետարան կարդալ, խնկարկել, և այլն, բայց չեն կրնար վերաբերում ընել Ավորութիւն չկայ որ օրիորդներ կատարեն սարկաւագի յատուկ յիշեալ պաշտօնները։ Կայ բացառիկ պարագայ մը։ Կանոնց վանքերու՝ կուսաստաններու մէջ, ուր Ս. Պատարագի սպասաւորողները ամրող իդական սեռէ են, կը գանուին նաև ձեռնադրուած սարկաւագուհիներ, որոնք կրնան իրենց եկեղեցին մէջ կատարել սարկաւագի վերաբերեալ բոլոր պաշտօնները։

Ն. Վ. Պ.

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ՎԱՐՉՈՎԱԿԱՆ ԵԽ ԺՈՂՈՎԱԿԱՆ

Մարտ 20 — Ապրիլ 25, հինգ եօթնեակներու ընթացքին եօթք անզամներ գումարուեցաւ Ս. Արքուոյ Տեօլիք Խորհուրդը, և զրադեցաւ վանական, դրաբանական, տաճական, տաճական գործոց վերաբերեալ տնօրինութիւններով, իսկ իրեն Կրօն, Աստեան հինգ անգամ զրադեցաւ ամուսնական, ժառանգական և կտակային գործերով։

● Մարտ 22ի զշ. օրը ի դիմաց Ս. Պատրիարք Հօր Տ. Նորայր եւ Տ. Միոն վարդապետներ ներկայ գտնուեցան Ե. Ք. Ք.ի գումարման, որ տեղի ունեցաւ նոյն ընկերութեան ակումբին մէջ։

● Մարտ 24ի եշ. օրը, Ս. Պատրիարք Հօր այցելեցին Հարություն ամերիկան Համալսարանի ուսուցիչներ եւ մատենադարանապետ հայագէտ Թօօք. Պլէյք ի Տիկին նիւ։

● Մարտ 25ի ուր. օրը, Ս. Պատրիարք Հօր այցելեց հանգ. ազգ. գործիչ Մ. Բարթուզային որդին դատաւոր Պահան Յ. Բարության իր Տիկինը։

● Մարտ 26ի շաբաթ օրը, Եղիպատոսի Անն. Յուլա բագաւարի Ֆենքիան առելզարձին առթիւ, Ս. Պատրիարք Հայքը, ընկերակցութեամբ թարգման Տ. Պարզեցի վարդապետի եւ զիւանապետ Գ. Նորինանի, Հնորհաւորական այցելութիւն տուաւ Եղիպատոսի Հիւապատուարանը։

● Նոյն օրը, կէս օրէ վերջ. Ս. Պատրիարք Հօր այցելեց Պաղեսամի խոհանոց կրօնայետ Մեծ Միքարիկ, ընկերակցութեամբ երկու կրօնայետ ամամար անդամներու հնարդեց համար անյկական սրբավայրութեամբ։

● Մարտ 28ի թշ. օրը, Ս. Պատրիարք Հօր այցելեց Հ. Բ. Ընդհ. Միութեան շրջանային բնիք Պ. Միք. Ալեքսանիեան։

● Մարտ 29ին զշ. օրը, Ս. Պատրիարք Հայքը, ընկերակցութեամբ Տ. Մերուպ եւ Տ. Մկրտիչ Սրբա-

րազաններու եւ Տ. Դէորդ, Տ. Մուշեղ, Տ. Դաւիթ եւ Տ. Պարզեց վարդապետներու, զատկական շնորհաւութեան այցելութիւն տուաւ Լատին Պատրիարքանին եւ Ֆրանչիսկան Միաբանութեան Մեծաւորին, եւ երկու տեղերն ալ ընդունեցաւ մեծարաններով։ Իսկ պատր. գոխանորդ Տ. Մկրտիչ Սրբազն յետոյ, ընկերակցութեամբ Տ. Մուշեղ եւ Տ. Պարզեց վարդապետներու, այցելեց անկիրան նպակուարանին, Միոնի գերման կաթոլիկներու ննչումն Ս. Կուսի վանքի միաբանութեան, Հայ կաթոլիկներու եւ Ցոյն կաթոլիկներու վանքերը։

● Մարտ 30ի դշ. օրը, Ս. Պատրիարք Հօր այցելեց Պատրիներու Տ. Բախիլիոս Խպա., իր եղիպատոսին վերադարձին առթիւ, Եղիպատոսի իրենց Ամեն. Տ. Եղիկաննեւ Պատրիարքին եղրայրական ողջունները բերելով։ Տ. Բախիլիոս Սրբազն այս առթիւ ն. Ամենապատութեան ընծայ էր բերած փրա-պատկէ ասայ մը։

● Ապրիլ 1 ուր. օրը, Ս. Պատրիարք Հօր այցելեց Ամեն. Տիկին Ամեն Պուրոս Դալի փառա- նուասուէն. Ն. Ամենապատութիւնը պատուվ ըն- դուեց հայրենասէր Տիկինը, ընկերակցութեամբ Տ. Մերուպ եւ Տ. Մկրտիչ Սրբազններու եւ դիւանա- պատ Պ. Նուրեանի։

● Ապրիլ 8ի ուր. օրը Ս. Պատրիարք Հօր այցելեց Եղիպատոսի եւ Առանանի անկիրան նպան. Եղիպատոսի անկիրան վիստանորդին եւ կանոնիկոս Հ. Պրիմէէնի, Քնուուներութեան, որ եղաւ շատ սիրակիր, ներկայ գտնուեցան Տ. Մերուպ եւ Տ. Մկրտիչ Սրբազններ եւ Տ. Մուշեղ, Տ. Տրդատ, Տ. Դաւիթ եւ Տ. Պարզեց վարդապետներ։ Տ. Կուսի Սրբազն այս առթիւ գո- հացուցիչ տեղեկութիւններ հայորդեց մատնաւորա- պէս Սուտանի Հայ գաղութին մասին։

● Նոյն օրը, կէս օրէ վերջ. Սրբազն Պատ- րիարք փոխադարձ այցելութիւն տուաւ Գեր. Կուսի Սրբազնի, Անկիրան Եղիպատուարանին մէջ, ըն- կերակցութեամբ Տ. Կիւրեղ եւ Տ. Պարզեց վարդա- պետներու։

● Ապրիլ 11ի թշ. օրը, Ս. Պատրիարք Հայքը, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ վարդապետի, ներկայ գտնուեցաւ Պաղեստինի Արդարութեան Վասեմ. Նա- խարարի տարեկան Քէյանեղանին, որուն ներկայ էին Վասեմ. Բարձր Գոմիսէրը, բոլոր Հիւապատուները եւ նոգեւոր պետներ եւայլն։

● Ապրիլ 12ի զշ. օրը, Ս. Պատրիարք Հայքը, Հուսարաբակն Տ. Մերուպ Սրբազն, կալ. տե- սուչ Տ. Դէորդ վրդ.ի եւ դիւանապետ Պ. Նուրեանի գնաց Երեմակ, պաշտօնապէս ընդունելու համար այն գետինը, զոր կառավարութիւնը, ուրիշ պատ- րիարքարաններու հնաւ մեզ եւս արամադրած էր Եղանակնի ափին վրայ, մերժաւոր պապազի մը մէջ նոն շնուելու համար հայկական սրբավայր։

● Ապրիլ 16ի թշ. օրը, Պատրիարք Պայքանի տօնին առթիւ, Ս. Պատրիարք Հայքը շնորհաւորա- կան այցելութիւն տուաւ Պաղեստինի իսլամներու Միծ-Միւֆթիին, ընկերակցութեամբ Տ. Մկրտիչ Սր- բազնին եւ Տ. Դաւիթ եւ Տ. Պարզեց վարդապետնե- րու. իսկ Տ. Մկրտիչ Սրբազն եւ Տ. Պարզեց վրդ.

այցելեցին յետոյ բաղարապետ պլյին եւ ուրիշ իսլամ երեւլիներու:

● Ապրիլ 21ի եշ. օրը, Ազսեմ. Ռուկան Թէյ Մարտիկեան ժամանեց Երևանդէմ. թարգման Տ. Պարզեց վրդ. եւ հիւրենկալ Տ. Դարեզին վարդապետ. յանուն Ա. Պատրիարք Հօր. զիմաւորնեցին զինքը կայարան եւ առաջնորդեցին ի Ա. Աթոռ:

● Ապրիլ 26ին, զշ. օր, Ճող. Տ. Ցիրան վրդ. վերադարձաւ Սուտանէն, իր առաջիկոթեան մասին՝ թերթիս յաջորդ թիւով:

ԵԿԵՂԵՑՑԱԿԱՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ

Մեծ Պահոց ամբողջ ընթացքին, Ա. Աթոռոյ մէջ և ի Ա. Ցարութիւն, ի Բեթղեհէմ, ի Գիթսեմանի, ի Ա. Փրկիչ, ի Ա. Հրեշտակապետ, հայլն, եկեղեցական, աւանդական և իրաւական և պատարագները, պաշտամունքներն ու արքարդութիւնները կատարուեցան կանոնաւորութեամբ և վայելուչ շուրջով շարաթը երկից, զշ. և եշ. երեկոները տեղի ունեցաւ Եկեղեցի ժամերգութիւն, միշտ ի ներկայութեան խոռոն բազմութեան, ամէն զշ. երեկոյ քարոզեց Ա. Պատրիարք Հայոցը իսկ զշ. և ուր. առաւտաները կատարուեցաւ Արեւադարի հանդիսաւոր ժամերգութիւն, զշ. օրերը՝ քաղաքի և վանաբնակ ժողովորդի զորոցական մանկանց և ուր. օրերը ժամանակառ աշակերտներու երգեցողութեամբ:

● Մարտ 22ի զշ. երեկոյեան Ա. Ցարութիւն առաջ առաջին մէջ քարոզեց Ա. Պատրիարք Հայոցը, նիւթ առնելով Հառվայեցւոց թղթի մի. դլուխէն, բացարկեց թէ քրիստոնէական կեանքը պարտականութեան կեանքն է, փոխանակ արեան զանին, զոր կը յանձնարարէր հին ու խսի անտեսութիւնը, Աւետարանը մեղի կը հարկադրէ խօսուն պատօնը կամ կենդանի պատարացը, որ կեանքը մշտական նուրիումի վերածելու խորհուրդն է ինքնին. պարզեց թէ որպեսողի մարդ կարենայ այդպիսի զօրութեան մը վերածել իր կեանքը, պէտք է որ ինքզինքը կարենայ ենթարկել Աստուծմէ իրեն բաշխուած շնորհաց ներգործութեանը, զգաստ հոգւով՝ այսինքն առանց անձնահաճ խրոխտանքներու, վասնդի ինչ որ իրեկ կարողութիւն կը զգանք մեր մէջ, շնորհն է այն, Աստուծմէ ընդունուած. այդ կարողութիւնը կամ շնորհը մեր կոչումն իսկ է, զոր գործազրելու պէտք է ձկոտինք՝ անտրտունչ այլ մշտական տքնութեամբ:

● Մարտ 26ի շարաթ առաւտառուն, Ա. Կիւրեղիսեր տօնին առթիւ, Ա. պատարագը մատուցուեցաւ Ա. Ստեֆանոսի մատրան մէջ, Երուսաղէմի հայրապետ Ա. Կիւրզի նուրիուած սեղանին վրայ, որուն ներքեւ աւանդութիւնը կը ցուցնէ վիմափոր այն աւագանը, որուն մէջ կատարուեցան Երեման Խաչի օրը իր ձեռքով կատարած մկրտութիւնները: Պատարագին էր Տ. Մուշեղ վրդ.:

● Մարտ 27ի կիրակի առաւտառուն ժամերգութիւնը կատարուեցաւ Ա. Ցարութիւն առաջ պատարագը, իսկ պատարագը՝ ի Ա. Հրեշտակապետ, ժամերգարան էր Տ. Պարզեկ վրդ. Պարզեկ եց Տ. Դաւիթ վրդ., որ խօսելով օրուան խորհութիւն առթիւ, ներկայացնեց կարսուած զբամին, կարսուած ոչխարին և անառակ որդիին առակներուն պատկերները եւ բացարկեց Աստուծոյ սիրոյն անհամ մեծութիւնը մարդուն համար, որ իրեկ արժէք, իրեկ կեանք և իրեկ հոգի, իր անկարնչական նշանակութիւնը ունի աստուածային բարութեան առջեւ, և զգացուց թէ միայն այս մտածումը պէտք է ամենէն մեղաւոր սիրախն մէջ ալ անչէ պահն փրկութեան յոյուր:

● Մարտ 29ի զշ. ի Եկեղեցին Ա. Պատրիարքը քարոզեց Ա. Ցարութիւն Մայր տաճարին մէջ, նիւթ առնելով Դ. Աւետարանէն՝ Յայնանէս Մկրտիչի նախեալ բնի Ցիսում ասէ, Անն Գալին Աստուծոյ խօսքէն, նկարագրեց հոգելից տուառութիւնը՝ զոր Ցիսուսի անձն իսկ պէտք է գործած ըլլայ իր ժամանակակիցներուն վրայ. ապա ներկայացնեց Աւետարանը, իրեկ Ցիսուսի բուն հարազատ պատկերը, բայց ամենէն աւելի իրեկ Փրկչին կենդանազգիր պատկեր մատնանչեց ճշշմարիտ հաւատացեալին կեանքը, որուն մէջ ստուգապէտ Քրիստոս է որ կը նկարուի, առաքելական բացարարութեան համեմատ (Փաղ. Դ. 19), եթէ Ա. Հոգիին չնորհը կարենայ հոն գտնել մաքուր ընդունարան մը բարի ներգործութեանց:

● Ապր. 2ի չր. կէսորէն ետքը Միարանութիւն և աշակերտք դացին Համբարձման լեռը, ըստ աւանդական սովորութեան և իրաւանց, կիրակամուտի ժամերգութիւն, իսկ գիշերուան առաջին պահուն կատարուեցաւ զիշերացին և առաւտառան ժամերգութիւն և ս. պատարագ մատուցուեցաւ բուն Համբարձման ըըրատեղուոյն վրայ և վերագարձան կէս գիշերին:

● Ցանչորդ առաւտառուն, ապր. 3ի կիր., Ա. Պատրիարքի նախագահութեամբ, ամրող Միարանութիւն և աշակերտք և խոռոն ժողովուրդ, հանդիսական զնացքազի գացին Համբարձման լեռը, ուր վրանի ներքեւ պաշտամունք կատարուեցաւ, և Տ. Դէսորդ վրդ. մատոյց հանդիսաւոր պատարագ, իսկ Տ. Միոն վրդ. խօսեցաւ, օրուան խորհուրդով, Տնտեսի առակին վրայ քարոզ մը, որուն ամփոփումը ներկայ թիւիս մէջ հրատարակուած է:

● Ապր. 5 զշ. ի Եկեղեցին, քարոզեց Ա. Պատրիարք Հայոցը, նիւթ առաւ. Ա. Կորնթ. ԺԴ. գլուխէն, վերըուծելով սիրոյ այդ շքեղ էջը, պանձացուց այդ աստուածային առաքինութեան մեծութիւնը, իրեկ ներշնչութիւնը սրտի հոգւոյ և մոքի մեծագործութեանց, որոնք ըըրիստոնէական կեանքը վառաւորած են իրենց հոյակապ արդիւնքներով:

● Ապր. 9ի չր. երեկոյեան, Ա. Պատրիարք Հօր նախագահութեամբ, ամրող Միարանութիւնը Հրաւափառով մուտք գործեց ի Ա. Ցարու-

թիւն, ուր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ կիբակամուտի ժամերգութիւնը:

❸ Յաջորդ օրը, ապր. 10ի Պատաւորի կիրակին, գիշերային և առաւտօնեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Յարութեան տաճարին նոյն Ս. Խռառաւորիչ հայկական եկեղեցիին մէջ, իսկ ո. պատարազը մեծահանգիստ կերպով կատարուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. պատարագիչն էր, ըստ սովորութեան, Ս. Պատրիարք Հայոք, որ և քարոզեց, օրուան խորհուրդին համեմատ, ազօթքի կարեւորութեան վրայ. բացատրեց թէ ազօթքի իդքը, որ կրօնական զգացումին գիտակցութիւնը կը շեշտէ մարդուն մէջ, հոգիին կամ հոգեկան եկեանքին զարթումի պահն է բանաւոր էակին մէջ, թէ ազօթքը ամենէն բարացուցական զիմն է մարդուն հոգիին. շեշտեց ստիպողականութիւնը մշակումին այդ զգացումին, որ, իր պարզագոյն ձևին մէջ ուրիշ բան չի նշանակեր, իբէ ոչ մարդուն մըշտական եւ կենդանի հաղորդակցութիւնը իր խոհալին հնաւ — Պատարագէ վերջը, նախագահութեամբ Ս. Պատարագիչն եկեղեցական թափորք երից զարձաւ Ս. Գերեզմանին շուրջը:

❸ Ապր. 12 գշ. եկեղեցին Ս. Պատրիարքը քարոզեց. Նիւթն էր երկու այլի կիները. մին. Աւետարանով անմահացած տիպարը, որ սրտանուէր սիրոյ գաղափարին անձնաւորումը մնաց քրիստոնէական բարոյականին մէջ. միւսը՝ ազգ. եկեղ. պատմական աւանդութեան ներկայացուցած այն բարի հայունին, որ տասն և հինգ տարիներ ամէն օր հաց մը կը ձգէր խորվիրապէն ներս, որպէսզի լուսաւորիչը անսուազ չմեանի Աւելի երկարօրէն նկատի առաւ երկրորդ զէմքը, յիշեցնելով լուսաւորչի մուտն ի վիրապի տօնը, և անոր մէջ մատնանշեց խորհրդանշանը հայ կնոջ զերին՝ իր եկեղեցին այսինքն իր ազգին բարոյական կեանքին պահպանութեան և մշակման գործին մէջ:

❸ Ապր. 17.ի Գալատեան Կիրակիին, Ս. Փրկիչ և կեղեցիին մէջ պատարագեց Տ. Յակոբը Վարդապետ Քարոզեց Տ. Հայկացուն Վարդապետ, և, նիւթը առնելով օրուան շարականէն բացատրեց Քրիստոսի աշխարհն, երուսաղէմ և վիշին գալուստներու եռակի խորհուրդը, որուն նպատակն էր մարդուն հոգեկան փրկութիւնը բացատրեց նաև թէ քրիստոնէին վերաբերմունքը այն պէտք է լինի Քրիստոսի գալստեան գաղափարին հանդէպ, ինչ որ կը լինի իր բարոյական տկարութիւնը զգացող մեղաւորին զիտակցութիւնը արդարութեան և ճշմարտութեան դադափարին հանգէզ, զի մարդուն բուն մեծութիւնը կը կայանայ իր մեղանչականութեան զգացումին և փրկանաւորուելու իզմին և յոյսին մէջ :

❸ Ապր. 23ի ըր. երեկոյին (Խաղկապարդի կիրակամռում՝ ըստ Հին Տօմարի), Ս. Պատրիարքի նախագահութեամբ հանդիսական գնացք կա-

տարբուեցաւ ի Ս. Յարուէլին, ուր, Ս. Կերեզմա-
նին վրայ պատրիարքական եւ միաբանական
ուժութիւն կատարումէն վերջ, Հայկական Գողգո-
թայի սրբավայրին մէջ պաշտոնեցաւ կիրակա-
մատիւ ժամերգութիւնը:

◎ Յաջորդ առաւտօտուն, ժամերգութիւն կատարուեցաւ Ս. Յարութեան տաճարի նոյն սըրբավայրին մէջ, ուր պատարագեց Տ. Վրթանէս վարդապետ, քարոզեց Ս. Պատրիարք Հայրը, նկարագրեց Քրիստոսի մուտքն Երուսաղէմ իր թագաւոր խաղաղութեան և ժողովուրդին խոնարդ դասակարգին սրտագած խանդավառութիւնը զինքն ընդառաջած ատենու թացատրեց այդ այցելութեան նորատակը, իրեւ լրում վրբեկագործութեան խորհուրդին Ներկայացուց Աւետարանը իրեւ այդ աստուածային այցելութեան յաներժացումը մարդկութեան մէջ, շեշտելով՝ մասնաւորապէս այն պարագային վրայի թէ կեանքին արծէքաւորումը կախում ունի այդ մշտնչնաւորուած այցին նկատմամբ մարդոց կաղմած ըմբռնումէնն ։ Ս. Պատարագէն վերջ, Յօնիերէն յիսոյ, մենք կատարեցինք մեծահանգէս թափօր, երիցս դառնալով Ս. Գերեզմանին Հուրիչը, հետեւորդութեամբ կպտիներու և Ասորիներու ։ Յիսոյ, Միաբանութիւն և Ժառանգաւոր հոգինոր երգեցողութեամբ եւան պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը օրհնեց ամէնքը ։ Երեկոյին, Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Կոնքացէի պատկանելի կատարողութիւնը և բազմաթիւ վարդապէջներու բացումի սրտագրաւ արարողութիւնը, որ Ս. Աթոռիս սեփական բարեպաշտական սովորութիւններէն մին է։

❸ Ս.Աթոռոյ Դիւանին մէջ չնորհակալութեամբ և օրհնութեամբ արձանագրուած են հետեւալ բարեպաշտական նույրատուրիսներ.— Պարոնէն Դիմիսցի Տիկ. Բարին Օստրովինան, Ս. Զատկի առթիւ, մոմագին, Տօլար 25.— Միքոնէն (Մէս.) Տէր և Տիկին Եղիշեն Պալտաստեան, մոմագին, Տ. 15.— Լորինէն Տիկ. Մարիամ Յ. Արաքեան մէկը թրք. կազի-ռակի, և մոմագին Տ. 5.— Տիկ. Փառանձնիմ Պետրոսին, իւղացին Ս. Յարութեան Տաճարին Համար Տ. 5.— Նույնիբ-Միքին Տիկ. Աստղիկ Քարակիօքեան, իւղացին, Տ. 10.— Պարուա-Ճնդկաստանի Հայ Եկեղեցիներու մէջ 1928-1931, չորս տարիներու ընթացքին ի նպաստ Ս. Աթոռոյ հաւաքուած Գանձանակաղրած, Միերլին, 12.— Եղիպառուէն հիւրաբար քաղաքու գտնուելով Ս. Յակոբ այցելող Վանիմ. Տիկ. Աննա Պուրգու Դալի Փաշայ, Պ. Ա. 10.— Կ. Պոլիխին Տիկ. Աննա Բարունակեան, պատրագուց, Պ. Ա. 3.— Կարենցի Տիկին Մարիամ Պատիկին, պատրագուց, Ս. Դիրեգմանին վրայ, Ա. Ա. 5:-

ԴՊԲՈՅԱԿԱՆ ԵԽ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Նոր կարգադրութեանց նետեամբով, Ս. Պատրիարք Հայոց, ու արքէն յունուարէն ի վես սկսած էր աւանդել քանի մը զատեր, ու շիհենք եւս սանձնեց ապրիլի սկիզբէն. այսպէս ու իր օպարական դասեռն ըիւն է այս եօրը ժամ:

❸ Յայտուած փափաքի մը Վրայ, Տեօտի Փաղպայ
ուսումնաբը, Ներկայ ամիսն կազմակցաւ հայելինի եւ¹
կրօնի ուսման զատաբէն մը, ոռու կը հետեւին մաս-
նաւորագէտ խղաքացի պատահինեւ, ոռու վաղոց օ-
տաւ գարմարան յանձնելուն համար գրկուած Եկե-
մայելինի լեզուի եւ եկեղեցոյ ուսումնեւին։ Այս դա-
սերը, ոռո՞ց կը հետեւին զանազան օտաւ դպրոցնեւէ
իր եւեսուն աւակերտնեւ, սասնձան են Տ. Միոն և
Տ. Հայկազուն վաղպահեսնեւ։ Դասախոսութիւնն տեղի
կ'ունենան փափի շշչափակին մէջ, Թագմանչաց վար-
ժարաբը, շաբաթ օտերը, կեսու վեց։

❸ Վասի. Դալմաս կիւլյենիկանի Մատենադարանի փախողութեան, նոգելոյա Դուռեան Ս. Պատրիարքի զիւշեան ոչը, փանուց և վարժանի երեւ գրադաստեան բար հիմ և նու զիւշեր, և ընդհանուր դաստուրումի զուծք պիտի կատարի թիվուաբ

• 8. Φωτικήρες Λαζαρέ τη Μετανομ Ηρακλείου από-
τηρή δή Φα. ορει αγετεύεσθαι συνημένη Κατιβιθικέων Λαζαρέ
Μακεδονικών:

❶ Ապրիլ 13ի Դւ. օրը, Ս. Պատրիարքի մեջ մասամբ անցուց վարժարանին մէշ և մասնակցեցաւ սուլիաւազաց զաստամի գերեխի համեմ :

• Ս. Պատրիարք, թնիկուկցութեամբ Տ. Այսէն, Տ. Հայկազուն և Տ. Զգօն Վարդապետներու, Երիշու այցելեց Գոմինիկեանց վանասունք, և, ապրիլ 13-ին եւեկոյ եղաւ Հ. Լուկրանծի բանախօսութեան, որուն նիւթը էր Կեօրէի կրօնը. իւկ ապրիլ 20ին՝ Հ. Պարինի բանախօսութեան, որուն նիւթը էր Ս. Յոհաննա աշտարակին ննիական տեղագրութիւնը:

❸ Միենայ օրը, ապրիլ 20ին, առաօտքան, Տ. Դավիթ, Տ. Միոս և Տ. Զգոյ Վարդապետներու ներկայացուութիւնը, զնաց Պաղստիճին հիւսիսակողմանը, Խաղուսի շրջանին մէջ նին Սումարիան, և Հերցգիկո Մէծի օրով ի պատճի Օգոստոս կայսեր Սկրամբի կոչուած Խաղաքին աւերակներ տեսնելու։ Հաւատեր եղած է Հարգրի Ամերիկան Համարատանի այն նեախօսական Մաքմինին կողմէ, որ ասինքներ ի վեց պեղումներ կը կատարէ այդ մարզին մէջ, և ուստի ամենըն գործօն անշամենելու են Բաօք. Պիեյք հայացէ անուանի բանասէր և Բաօք. Լիյք, որ եղած է և անձամբ առաջնորդյան Ն. Ամերիկացուութիւնը ի Սումարիա կամ Մեքսիկա Մինչեւ Եւեկոյեան ժամը չար չար, տեղոյն պեղումներ տեսնելու և նեախօսական մարզին պատասխութիւնները վայելիք վեց, Ա. Պատրիարքը էլ իր հետեւողները վեալարձան Ս. Առու։

❸ Պեյրուրէն Տիգրանիկեացի հեզզ. Յովհաննէս Կանաքարեանի կողմէկ՝ Ս. Ալբառոյ Մատենադարանին նույիրուած են Հայերէն զանազան թերթերու հաւաքածոներ:

իր մահիանսցուն կնքեց հանրածանօթ մտաւորա-

իսկ եւ բանասէր Պ. Երևանի Մուշտիկ Սուրբանեան, որ, բանի մը տարիներէ ի վեր, արդէն, խօթացեալ վիճակ մը ունէր՝ ոսկրախախտումի արկածի մը հետեւանքով. իսկ շուրջ վեց ամիսներէ ի վեր կը տառապէր ընդհանուր տկարութեամբ:— Հանգուցեալը վերջին շառաւիդն էր Յոսպէ բաղարի ամենէն պատուաւոր Մուրատեան ընտանիքին, որ Պաղեստինի հայոթեան մէջ շուրջ երեք բառորդ դարէ ի վեր ուշազրաւ եղած էր իր ընկերային եւ ազգային դիրքովը: Եր հայրը, Ցակոր, հօրեղայրը Աթմէսոն, երկար ատեն մեռնախաօրէն վարած էին, Յոսպէի մէջ, զերման հիւպատուստիեան պաշտօնը. իսկ երկու եղբայրները, Դէորդ եւ Մրապիսն, ինչպէս ինքն եւս, ատեն մը՝ Պէյրութի մէջ բարտուդարութեան պաշտօն վարած են Ֆիրման հիւպատոսարանի, եւ միշտ, ազգ. կեսանքի մէջ, իր հայրն ու հօրեղայրը եւ երկու եղբայրները մանաւանդ, ջանացած են ունենալ զործոն դեր, եւ մասնաւորաբար Ս. Աթոռիս վերաբերութեամբ ցոյց տալ ջերմ սէր: Ֆիրտէրիկ կանուխ բաշուցաւ բաղարական ասպարէլցէն, ուղելով աւելի իր մտաւորական եւ զրական հակումներուն նույրուիլ: Երշանաւարած Հայտէլպէրկի Համալսարանէն, ունէր բարձր զարգացում եւ դասական եւ երպագական արդի լեզուներու եւ զրարարի եւս խոր հմտութիւն:— Ինչպէս Սինեի Ներկայ տարւոյ Մարտ ամսի թիւին մէջ, իր վերջին մէկ զործին նույրուած մատենախոսականի մը մէջ մանրամասնուած էր, զրած է Օպիհաննու Յայնառքիան հայերէն թարգմանութեան վրայ բանախրական ստուարուանասիրութիւն մը. Արարատ Ս. Գրոց մէջ մակազրութեամբ նոյնակէս բանախրական զործ մը, զերմաներէն լեզուով, որ արժանացած է Հիւլպշմանի եւ Հ. Տաշեանի զնանատութեան, եւ Պարապետն Ս. Գիւրա անունով կրօնական զրականութեան ուղելով երկասիրած զործ մը, Սինեի մէջ ճրատարակած է նոյնակէս նախնեաց մատենազրութեան նըշխարներէն Ս. Եփենի Ասուրոյ վեծասան ասացուած վասն Նիկոնիդիեայ բագամին զործեց: Որչափ հմտու էր իրեն բանասէր եւ իրեն ասուածարան, նոյնբան լուրջ էր եւ պարկեցած իրը մարդ: Մեռաւ շուրջ եօթանասունդինզամեայ. անգաւակ եւ ամուրի, ինչպէս եղած էին միւս երկու եղբայրներն եւս: Յուղարկաւորութեան արարութիւնը կատարուցաւ Ապրիլի 21 ին, Ս. Աթոռոյս Մայր Տամարին մէջ, բաղարիս եւ Յոսպէի զերման զարութէն բարեկամներու, եւ ազգայիններու խուռան բազմութեան ներկայութեամբ, եւ բովանդակ Միաբանութեան եւ ժառանգաւորաց մասնակցութեամբ: Կը նախազանէր Ս. Պատրիարք Հայրը, որ զգածուած սրտի զամբանական մը խօսեցաւ, ողբարյով ոչ միայն իր կորուսած, այլ նաև իր ազգատումնին շիշումը՝ իր զազագին առչեւ, եւ դրուատիքն ընելով իր մտաւորական եւ բարոյական արժանիքին: Յետոյ, ամրող Միաբանութեան թափութիւն, որուն կը նախազանէր Ս. Մեսրոպ Մրագան, մարմինը առաջնորդուցաւ ազգ. զերեզմանաստուն, ուր եւ ամփոփուցաւ: Այս մահը խոր տրամութիւն պատճառեց Ս. Աթոռիս եւ Երուսաղէմի ազգային շրջանակներուն մէջ:

S U P P L E M E N T

Ապրիլ 20 էն 21 լուսագոր հիմնագշաբթիի կէս զիշեցին Ս. Քաղաքիս զերմանական հիւանդանոցին մէջ

Տպարան Մըլոց Օսկերիանց, Երևանիւմ